

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ (փաստաթղթային  
կոդ՝ Կ-383-02.10.2018-ՖԿ, ԱՀ, ԳԿ, ԱՍ, ԵԻ, ՊԱ, ՊԻՄԻ, ՏՏԳԲ, ՏՀ-011/0)

«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ)  
քննարկվել է ՀՀ ԱԺ աշխատակազմի տնտեսագիտական փորձաքննության  
վարչությունում:

Նախագիծը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությամբ և «Հայաստանի  
Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև  
բյուջետային հարաբերությունները կարգավորող մյուս օրենքներով սահմանված  
պահանջներին:

Նախագծի ուսումնասիրության և քննարկման արդյունքում ձևավորվել են մի  
շարք նկատառումներ, որոնցից հիմնականները կայանում են հետևյալում:

1. 2019 թվականին հանրապետության տնտեսությունը բնութագրող հիմնական  
մակրոտնտեսական ցուցանիշների գծով կանխատեսումները բավականաչափ  
համեստ են: Մասնավորապես, ըստ ՀՀ կառավարության կանխատեսումների,  
առաջիկա տարում ՀՆԱ-ի իրական աճը կկազմի 4.9 տոկոս՝ ընթացիկ տարվա  
սպասողական 6.5 տոկոսի դիմաց:

Աղյուսակ 1.

Տնտեսական աճի դինամիկան 2015-2019 թվականներին

	2015	2016	2017	2018	2019
	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	կանխ.
Տնտեսական աճ (%)	3.2	0.2	7.5	6.5	4.9

Ինչպես նկատում ենք, 2019 թվականի համար կանխատեսվող տնտեսական  
աճի ցուցանիշը (որն, ի դեպ, դրված է նաև պետական բյուջեի ցուցանիշների  
հաշվարկման հիմքում), զգալիորեն զիջում է 2017 և 2018 թվականներին  
հանրապետությունում գրանցված և ակնկալվող ցուցանիշներին,  
համապատասխանաբար՝ 2.6 և 1.6 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, այն

գերազանցում է 2015-2016 թվականներին գրանցված ցուցանիշին 1.7 և 4.7 տոկոսային կետով: Տնտեսական աճի կանխատեսվող մակարդակի ապահովումն, անշուշտ, որոշակի հիմք կհանդիսանա տնտեսության զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման և հարկաբյուջետային ցուցանիշների բարելավման համար: Միաժամանակ, տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշի ապահովումը կախված է կլիմի ոչ միայն երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունից, այլ նաև արտաքին տնտեսական գործոններից և համաշխարհային տնտեսության զարգացումներից: Ընդ որում, ՀՀ կառավարության կողմից կանխատեսվածից 2.0 տոկոսային կետով ավելի ցածր ՀՆԱ-ի ձևավորման ազդեցությունը բյուջետային եկամուտների վրա գնահատվում է 9.9 մլրդ դրամի չափով: Կարծում ենք, նման իրավիճակում պետք է նախատեսվեն այլընտրանքային աղբյուրներ տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշի չապահովման դեպքում բյուջետային մուտքերի ձեռքբերման ծածկելու համար:


2. Համաձայն 2019 թվականի բյուջետային ուղերձի, առաջիկա տարում արդյունաբերությունը կաճի 5.0 տոկոսով, գյուղատնտեսությունը՝ 4.0 տոկոսով, ծառայությունների ոլորտը՝ 5.0 տոկոսով, իսկ շինարարության ոլորտը՝ 5.5 տոկոսով:

Աղյուսակ 2.

Տնտեսության իրական ճյուղերի աճը 2015-2019 թվականներին

	2015	2016	2017	2018	2019
	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	կանխ.
ՀՆԱ	3.2	0.2	7.5	6.5	4.9
Արդյունաբերություն	6.2	7.6	6.6	5.0	5.0
Գյուղատնտեսություն	13.2	-5.0	-5.3	4.0	4.0
Շինարարություն	-3.1	-14.1	2.5	6.1	5.5
Ծառայություններ	1.6	3.2	12.4	8.0	5.0

Ինչպես նկատում ենք աղյուսակ 2-ից, 2019 թվականին ամենաբարձր աճը կանխատեսվում է շինարարության ոլորտում, որը կկազմի 5.5 տոկոս: Միաժամանակ, պետք է դրական համարել այն փաստը, որ վերջին տարիներին նման զարգացումների արդյունքում որոշակիորեն փոխվել է նաև ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը:



Գծապատկեր 1. Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ում 2015-2019թթ.

2015-2019 թվականներին ՀՆԱ-ի կառուցվածքում մեծացել է արդյունաբերության տեսակարար կշիռը՝ 16.3 տոկոսից հասնելով 17.3 տոկոսի: Փոխարենը, նվազել են գյուղատնտեսության և շինարարության ոլորտի տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար կազմելով 15.8 և 7.2 տոկոս՝ 2015 թվականի 17.2 և 9.4 տոկոսի դիմաց: Նման փոփոխությունը, նախ և առաջ, դրական է ներկայանում հարկային եկամուտների ձևավորման տեսանկյունից, քանի որ ՀՀ-ում գյուղատնտեսության և շինարարության ոլորտները հիմնականում հարկազատված են և համաձայն կառավարության գնահատականների՝ մասնակցելով ՀՆԱ-ի ձևավորմանը, շոշափելի ավանդ չեն ունենում հարկային եկամուտների ավելացման գործում: Մասնավորապես, ինչպես ցույց են տալիս աղյուսակներ 3-ի տվյալները, գյուղատնտեսության և շինարարության ոլորտներում ձևավորվող ավելացված արժեքի հարկի հարկման բազաներից նվազեցումները բավականաչափ մեծ մասնաբաժին ունեն նվազեցվող գումարների կազմում:

Աղյուսակ 3.

Սպառումից գանձվող ԱԱՀ-ի 2017-2019թթ նվազեցման ենթակա գումարներն ըստ ՀՆԱ-ի ճյուղերի (մլրդ դրամ)

Ցուցանիշները	2017	2018	2019
	փաստացի	սպասողական	կանխատեսում
1. Նվազեցման ենթակա	2,187.7	2,472.8	2,695.5

գումարներն ըստ ՀՆԱ-ի ճյուղերի, որից՝			
1.1 Արդյունաբերություն	84.7	89.1	97.3
1.2 Գյուղատնտեսություն	471.7	588.8	636.9
1.3 Շինարարություն	246.9	266.7	292.7
1.4 Առևտուր	111.9	123.5	134.8
1.5 Տրանսպորտ և կապ	85.5	94.4	103.1
1.6 Այլ ճյուղեր	1,187.0	1,310.2	1,430.7

Հետևաբար, կարևորելով հանդերձ երկրում տնտեսական աճի ապահովումը, միևնույն ժամանակ, պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի բարելավման ուղղությամբ, ինչը կնպաստի հարկային բեռի հավասարաչափ բաշխմանը և, դրանով իսկ, բյուջետային եկամուտների ավելացմանը:

3. Վերջին տարիներին հիմնականում հուսադրող չէ պատկերը հանրապետությունում իրականացվող ներդրումների գծով: Մասնավորապես, 2019 թվականին դրանց ծավալը ընթացիկ տարվա համեմատությամբ կաճի ընդամենը 0.3 տոկոսային կետով և կկազմի ՀՆԱ-ի 23.6 տոկոսը՝ 2018 թվականի 23.3 տոկոսի դիմաց: Ընդ որում, առաջիկա տարվա ցուցանիշը գերազանցում է 2015 թվականի մակարդակին 2.9 տոկոսային կետով:

Աղյուսակ 4.

Ներդրումների մակարդակը ՀՀ-ում 2015-2019 թվականներին

	2015	2016	2017	2018	2019
	փաստ.	փաստ	փաստ	կանխ.	կանխ.
Ներդրումների մակարդակ (ներդրումներ/ՀՆԱ%)	20.7	18.0	19.0	23.3	23.6

Ակնհայտ է, որ ներդրումների նման մակարդակը դեռևս բավարար չէ տնտեսությունում լուրջ առաջընթացի ապահովման համար: Ընդ որում, առաջին հերթին, անհրաժեշտ է հետևողական քայլեր իրականացնել ներդրումային միջավայրի վրա բացասաբար ազդող գործոնների բացահայտման և չեզոքացման ուղղությամբ:

4. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծում եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 1 տրիլիոն 490.6 մլրդ. դրամի չափով, 2018 թվականի ճշտված 1 տրիլիոն 354.8 մլրդ դրամի և 2017

թվականի փաստացի 1 տրիլիոն 237.8 մլրդ դրամի դիմաց: Այլ կերպ ասած, առաջիկա տարվա բյուջետային եկամուտների պլանավորված ծավալը ընթացիկ տարվա ճշտված ցուցանիշին գերազանցում է մոտ 10.0 տոկոսով կամ 135.8 մլրդ դրամով: Ակնկալվում է, որ 2019 թվականին հարկային բեռի ծանրությունը բնութագրող հիմնական` «հարկային եկամուտներ և տուրքեր/ՀՆԱ» ցուցանիշը կկազմի 20.7 տոկոս` ընթացիկ տարվա ծրագրային և 2017 թվականի փաստացի ցուցանիշների 20.3 տոկոսի և 20.8 տոկոսի դիմաց: Ընդ որում, նախատեսվում է նաև, որ 2019 թվականին բյուջետային մուտքերի կազմում ամենամեծ տեսակարար կշիռ կունենան հարկերը և պետական տուրքերը` 1 տրիլիոն 399.2 մլրդ. դրամ` 2018 թվականի համար ճշտված և 2017 թվականի փաստացի մուտքերի համապատասխանաբար` 1 տրիլիոն 255.8 մլրդ. դրամի և 1 տրիլիոն 158.0 մլրդ. դրամի դիմաց: Պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային մուտքերի համապատասխանաբար` 39.0 մլրդ. դրամը և 52.4 մլրդ. դրամը: Կարծում ենք, որ նման ծավալով բյուջետային եկամուտների ավելացումը, չնայած որոշակիորեն զգուշավոր մոտեցում է (հատկապես հաշվի առնելով ստվերային տնտեսության և կոռուպցիայի դեմ պայքարի, ինչպես նաև տնտեսության ազատականցման ուղղությամբ ՀՀ կառավարության պատրաստակամությունը), այդուհանդերձ, կարելի է բավարար համարել:

Աղյուսակ 5.

Բյուջետային եկամուտների աճի դինամիկան 2017-2019 թվականներին

Եկամտատեսակ (մլրդ դրամ)	2017թ. համադրելի փաստացի (մլրդ դրամ)	2018թ. ճշտված (մլրդ դրամ)	2019թ. նախագիծ (մլրդ դրամ)
Ընդամենը եկամուտներ, որից	1,237.8	1,354.8	1,490.6
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,158.0	1,255.8	1,399.2
Պետական դրամաշնորհներ	14.6	39.1	39.0
Այլ եկամուտներ	65.2	60.0	52.4

Ինչպես նկատում ենք աղյուսակ 5-ի տվյալներից, առաջիկա տարում կանխատեսվող եկամուտների աճն, ընդհանուր առմամբ, կկազմի 135.8 մլրդ դրամ, 2018 թվականի 117 մլրդ դրամի դիմաց: Ընդ որում, հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով մուտքերը կավելանան 143.4 մլրդ դրամով: Համաձայն

բյուջետային ուղերձի, 2019 թվականի համար պլանավորվող հարկային եկամուտներից և պետական տուրքերի 1399.2 մլրդ դրամից 1358.7 մլրդ դրամը (97.1%) նախատեսվում է ապահովել ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների, 19.0 մլրդ դրամը (1.4%)՝ հարկային օրենսդրության փոփոխության, իսկ 24.9 մլրդ դրամը (1.8%)՝ վարչարարական միջոցառումների հաշվին:

5. Ըստ տնտեսական գործոնների և լրացուցիչ վարչարարական միջոցառումների 2015 թվականին պլանավորվել էր ապահովել 36.0 մլրդ դրամ (3.1%), 2016 թվականին՝ 24.0 մլրդ դրամ (2.1%), 2017 թվականին՝ 24.2 մլրդ դրամ (2.1%), 2018 թվականին՝ 30.8 մլրդ դրամ (2.5%), իսկ 2019 թվականին՝ 19.0 մլրդ դրամ (1.8%): Ընդ որում, 2015 թվականի համար պլանավորված ցուցանիշը, որը եղել է ամենաբարձրը վերջին տարիների համար, հիմնված է եղել ոչ միայն վարչարարական լրացուցիչ միջոցառումների, այլ նաև օրենսդրական փոփոխությունների (այդ թվում՝ նաև դրույքաչափերի և հարկման բազայի փոփոխության) վրա: Այլ կերպ ասած, վերջին տարիներին վարչարարության բարելավման հաշվին, որպես կանոն, պլանավորվում է ստանալ հարկային եկամուտների և պետական տուրքերի մոտ 2 տոկոսը: Այս տեսանկյունից, առաջիկա տարում հարկային վարչարարության բարելավման հաշվին ակնկալվող գումարները, չնայած տեղավորվում են վերջին տարիներին հանրապետությունում ձևավորված օրինաչափությունների շրջանակում, այդուհանդերձ, զգալիորեն ցածր են՝ հաշվի առնելով հանրապետությունում ձևավորված նոր տնտեսական իրողությունները և ստվերի դեմ պայքարը:

6. Համաձայն Նախագծի, հարկային եկամուտները և պետական տուրքերը 2019 թվականի համար ծրագրվել են 1 տրիլիոն 399.2 մլրդ. դրամի չափով՝ ընթացիկ տարվա համար ճշտված 1 տրիլիոն 255.8 մլրդ. դրամի և 2017 թվականի փաստացի 1 տրիլիոն 158.0 մլրդ. դրամի դիմաց: Հարկ է նշել, որ հարկային եկամուտների կառուցվածքում ԱԱՀ-ին և ակցիզային հարկին բաժին է ընկնում 572.4 մլրդ. դրամ, որը կազմում է հարկային եկամուտների և պետական տուրքի ընդհանուր գումարի մոտ 40.9%-ը (տես աղյուսակ 9-ը):

Աղյուսակ 6.

«2017-2019 թվականների պետական բյուջեների եկամուտների կառուցվածքը

Եկամտատեսակ	2017թ. համադրելի փաստացի	2018թ. ճշտված	2019թ. նախագիծ
-------------	--------------------------	---------------	----------------

	գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատմամբ (%)	գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատմամբ (%)	գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատմամբ (%)
Ընդամենը եկամուտներ, որից	1,237.8	22.2	1,354.8	21.9	1,490.6	22.1
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,158.0	20.8	1,255.8	20.3	1,399.2	20.7
Պետական դրամաշնորհնե ր	14.6	0.3	39.1	0.6	39.0	0.6
Այլ եկամուտներ	65.2	1.2	60.0	1.0	52.4	0.8

Ինչպես նկատում ենք աղյուսակ 6-ի տվյալներից, վերջին տարիներին հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության առումով գրեթե էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Անշուշտ, տվյալ ցուցանիշի բավականաչափ ցածր մակարդակն էականորեն սահմանափակում է պետության ծախսային պարտավորությունների ընդլայնման հնարավորությունները և, այս տեսանկյունից, առաջիկա տարիներին դրա աստիճանական բարձրացումը, կարծում ենք, պետք է դառնա ընդհանուր տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը: Ընդ որում, այն պետք է իրականացվի ինչպես համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքի բարելավման, այնպես էլ տնտեսության հարկային ներուժի լրացուցիչ օգտագործման և հատկապես ստվերային հատվածի կրճատման ուղղություններով: Հատկապես ուշադրության արժանի է այն փաստը, որ 4.9 տոկոս տնտեսական աճի պարագայում կանխատեսվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ընդամենը 0.4 տոկոսային կետով աճ: Այս առումով, կարծում ենք, հանրապետությունում առաջիկա տարիներին իրականացվելիք տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը պետք է լինի ոչ միայն տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովումը, այլ նաև դրա որակի բարելավումը՝ հիմնական շեշտը դնելով հարկունակ ճյուղերի վրա:

2019 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների գերակշիռ մասը կապահովվի ավելացված արժեքի հարկից ստացվելիք մուտքերի հաշվին, ինչը կկազմի մոտ 452.1 մլրդ դրամ: Փաստորեն, միայն ավելացված արժեքի հարկից ստացվող մուտքերը կկազմեն ընդհանուր հարկային մուտքերի (ներառյալ պետական տուրքը) 32.3 տոկոսը: Միևնույն ժամանակ, շահութահարկից և եկամտային հարկից ստացվող բյուջետային մուտքերն առաջիկա տարվա համար

նախատեսված են համապատասխանաբար՝ 166.1 մլրդ. դրամի (հարկային մուտքերի 11.9 տոկոսի) և 372.2 մլրդ. դրամի (հարկային մուտքերի 26.6 տոկոսի) չափով:

7. Հարկային ներուժի գնահատման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հարկային ծախսերի մակարդակը (հարկային ծախսերը գործող հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտներն են կամ այդ եկամուտների չափով պետության կրած այլընտրանքային ծախսերն են, քանի որ հարկային ծախսերը հանգեցնում են համապատասխան գումարի չափով բյուջետային ծախսերի կրճատման): 2019 թվականին միայն երեք հարկատեսակների գծով հարկային ծախսերի մակարդակը հետևյալն է (տես աղյուսակ 7-ը):

Անշուշտ, հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով բյուջետային եկամուտների կորուստը բավականաչափ մեծ ծավալ է կազմում՝ հատկապես ֆինանսական սուղ հնարավորությունների պայմաններում: Ըստ էության, դա կարող է արդարացված լինել միայն հարկային արտոնությունների տրամադրման արդյունքում ստացվելիք համարժեք օգուտների ապահովման պարագայում:

Աղյուսակ 7

Հարկային ծախսերի գնահատականը ՀՀ-ում 2019 թվականին (մլն դրամ)

	Հարկային ծախսերի տեսակը	Հարկային ծախսերի չափը	Կշիռը հարկային եկամուտների մեջ	Կշիռը ՀՆԱ-ի մեջ
<b>1</b>	<b>ԱԱՀ-ի գծով, այդ թվում՝</b>	<b>348,473</b>	<b>24.91%</b>	<b>5.16%</b>
1.1.	գյուղատնտեսություն	26,046	1.86%	0.39%
1.2.	առողջապահություն	47,462	3.39%	0.70%
1.3.	կրթություն	23,712	1.69%	0.35%
1.4.	ֆինանսներ և ապահովագրություն	48,843	3.49%	0.72%
1.5.	ԱԱՀ-ի շեմ	21,329	1.52%	0.32%
1.6	խաղատների գործունեություն	34,614	2.47%	0.51%
1.7	ինտերնետ շահումով խաղերի կազմակերպում	18,604	1.33%	0.28%
1.8	ոսկու և թանկարժեք քարերի հրացում	7,313	0.52%	0.11%
1.9	մարդասիրական օգնություն	3,402	0.24%	0.05%
1.10	պարարտանյութերի հրացում	3,956	0.28%	0.06%
1.11	այլ օրենքներով տրված արտանություններ	2,140	0.15%	0.03%



1.12	Վերը չնշված այլ արտոնություններ	111,051	7.94%	1.64%
<b>2</b>	<b>Շահութահարկի գծով, այդ թվում՝</b>	<b>19,928</b>	<b>1.42%</b>	<b>1.42% 0.29%</b>
2.1.	գյուղատնտեսություն	4,089	0.29%	0.06%
2.2.	հարկվող շահույթի նվազեցման արտոնություններ, բացառությամբ՝ գյուղատնտեսության	1,262	0.09%	0.02%
2.3.	շահութահարկի նվազեցման արտոնություններ	357	0.03%	0.01%
2.2.	ԱԱՀ-ի շեմ	14,219	1.02%	0.21%
<b>3</b>	<b>Եկամտային հարկի գծով՝ այդ թվում</b>	<b>73,860</b>	<b>5.28%</b>	<b>1.09%</b>
3.1.	գյուղատնտեսություն	73,860	5.28%	1.09%
<b>Ընդամենը</b>		<b>442,261</b>	<b>31.61%</b>	<b>6.55%</b>

Ղա պահանջում է ևս մեկ անգամ իմաստավորել հարկային արտոնությունների դերն ու նշանակությունը հարկային կարգավորման գործում և ստեղծել այն նախադրյալները, որոնց առկայության պարագայում միայն դրանք կապահովեն անհրաժեշտ սոցիալ-տնտեսական էֆեկտ: Ակնհայտ է, որ հանրապետությունում գործող հարկային արտոնությունների հետևանքով բյուջետային կորուստները համարժեք չեն ստացված սոցիալ-տնտեսական օգուտներին, ինչը ենթադրում է դրանց տրամադրման գործընթացի հանդեպ որակապես նոր մոտեցումների ամրագրում: Անհրաժեշտ է ապահովել առավելագույն հասցեականություն և բացառել տարբեր եղանակների կիրառման միջոցով դրանցից օգտվելու և սեփական հարկային պարտավորությունները նվազեցնելու հնարավորությունը, իրականացնել հարկային ծախսերի կանոնավոր և ամբողջական հաշվառում՝ ծախսերի չափի և տացված սոցիալ-տնտեսական էֆեկտի համադրման, այդ թվում՝ նաև արտոնությունների տրամադրման և կատարված ներդրումների արդյունավետության և փաստացի արդյունքի գնահատման միջոցով, հարկային արտոնություններ տրամադրել միայն որոշակի ժամկետայնությամբ՝ սամանելով դրանց ինքնաբերաբար դադարելու վերաբերյալ նորմեր:

8. Առաջիկա բյուջետային տարում պետական բյուջեի ծախսային մասը կկազմի 1 տրիլիոն 642.2 մլրդ. դրամ, ինչն ընթացիկ տարվա ճշտված ցուցանիշը գերազանցում է 126.5 մլրդ. դրամով: Ինչ վերաբերում է բյուջետային ծախսերի կառուցվածքին, ապա ծախսերի ամբողջ ծավալի 86.6%-ը կամ 1 տրիլիոն 422.7 մլրդ.

դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, իսկ 13.3%-ը կամ 219.5 մլրդ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին:

Առաջիկա տարում ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին կհատկացվի 312.3 մլրդ. դրամ (ընդհանուր ծախսերի 19.0 տոկոսը), պաշտպանությանը՝ 312.7 մլրդ. դրամ (ընդհանուր ծախսերի 19.1 տոկոսը), հասարակական կարգի պահպանության, անվտանգությանն ու դատական գործունեությանը՝ 136.2 մլրդ. դրամ (ընդհանուր ծախսերի 8.3 տոկոսը), առողջապահությանը՝ 91.7 մլրդ. դրամ (ընդհանուր ծախսերի 5.6 տոկոսը), կրթությանը՝ 141.8 մլրդ. դրամ (ընդհանուր ծախսերի 8.6 տոկոսը), սոցիալական պաշտպանությանը՝ 444.3 մլրդ. դրամ (ընդհանուր ծախսերի 27.1 տոկոսը):

9. Նախագծով 2019 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը ծրագրավորվել է ՀՆԱ-ի 2.24 տոկոսի չափով և կազմում է 151.6 մլրդ. դրամ: Դեֆիցիտի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել արտաքին ու ներքին աղբյուրների հաշվին, որոնք կկազմեն համապատասխանաբար 97.4 մլրդ. դրամ և 54.2 մլրդ. դրամ:

Ինչ վերաբերում է ՀՀ արտաքին պարտքին, պետք է նշել, որ 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել է 5.495 մլն. ԱՄՆ դոլար, 2018 թվականի տարեվերջի դրությամբ նախատեսվում է, որ այն կհասնի մոտ 5.686 մլն. ԱՄՆ դոլարի, իսկ 2019 թվականի համար ծրագրվող ցուցանիշը կազմում է 5.959 մլն. ԱՄՆ դոլար: Փաստորեն, արտաքին պարտքի աճը 2017-2019 թվականների համար կկազմի մոտ 464 մլն. դոլար (տե՛ս աղյուսակ 8-ը):

Աղյուսակ 8.

ՀՀ պետական պարտքը 2017-2019 թթ. (մլն. ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	31.12.2017թ.	31.12.2018թ.	31.12.2019թ.
Պետական պարտք՝ ընդամենը	6,775	7,053	7,468
ՀՆԱ-ի նկատմամբ %	58.9	55.0	53.4
այդ թվում՝			
արտաքին պարտք	5,495	5,686	5,959
ՀՆԱ-ի նկատմամբ %	47.8	44.4	42.6
ներքին պարտք	1,280	1,367	1,509
ՀՆԱ-ի նկատմամբ %	11.1	10.7	10.8

Ինչպես երևում է աղյուսակ 8-ից, 2017-2019 թվականների տարեվերջի դրությամբ պետական պարտքի գերակշիռ մասը (համապատասխանաբար՝ 81.1%-ը, 88.6% և 79.8%-ը) բաժին է ընկնում արտաքին պարտքին: Նման իրավիճակն, ըստ էության, օրինաչափ երևույթ է դարձել ՀՀ-ի համար՝ մեկ անգամ ևս ուշադրություն

հրավիրելով ֆինանսավորման ներքին աղբյուրների զարգացման և ֆինանսական ներքին ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդրի արդիականության վրա:

ՀՀ ԱԺ աշխատակազմի  
տնտեսագիտական փորձաքննության վարչության պետ՝

Ա. ԹԱՄԱԶՅԱՆ

ՀՀ ԱԺ աշխատակազմի  
տնտեսագիտական փորձաքննության վարչության  
տնտեսական փորձաքննության բաժնի պետ՝  
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Գ.

16.10.2018թ.